ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Պատմ. գիտ. դոկտոր **Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

Գլաձորի համալսարանի գիտաուսումնական գործունեության մասին տեղեկություններ են պահպանվել համալսարանում գրված ձեռագրերի հիշատակարաններում, ուսումնական ձեռնարկներում և ուսանողների ավարտաճառերում։ Հարցի լուսաբանությանը մեծ չափով օգնում են նաև այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Տաթևի համալսարանին։ Հայտնի է, որ XIV դարի 30-ական թթ., երբ Վայոց ձորում համալսարանի համար ստեղծվեց անտանելի ծանր վիճակ և համալսարանը Գլաձորից տեղափոխվեց Տաթև, այնտեղ, Գլաձորի սան Հովհան Որոտնեցու գլխավորությամբ, ուսումնական աշխատանքները շարունակվեցին Գլաձորի ուսումնական ծրագրերով և ավանդույթներով, ուստի այն տեղեկությունները, որոնք պակասում են Գլաձորում, կարելի է լինում լրացնել Տաթևի համալսարանի նյութերով։

Գլաձորում ընդօրինակված մի ձեռագրում (ՄՄ, № 473), որի գրիչներից մեկն է համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցին, զետեղված է մի խումբ առարկաների ծրագրային սխեմա՝ Արիստոտելի իմաստասիրական ծառն է» վերնագրով (էջ 122ա)։ Այդ սխեմայի հիմքը «բանական» կոչվող մայր գիտությունն է, որը բաժանվում է երկու խումբ առարկաների՝ տեսական և գործնական։ Տեսական մասերն են բնաբանությունը, ուսումնականությունը և աստվածաբանությունը։ Ուսումնականության մեջ մտնում են թվաբանությունը, երաժշտությունը, երկրաչափությունը և աստղաբաշխությունը։ Իսկ գործնականի մասերն են՝ բարոյականությունը, տնտեսագիտությունը և քաղաքականությունը։



Պարզվում է, որ «Արիստոտելի ծառ» կոչվող այս սխեման ծրագրային գործնական կիրառություն է ունեցել ինչպես Գլաձորի, այնպես էլ Տաթևի համալսարաններում, նրա մեջ թվարկված բոլոր առարկաները դասավանդվել են։ Այդ հայտնի է մեզ Կիրակոս Բանասերի հաղորդած տեղեկություններից։ Վերջինս, խոսելով Թովմա Մեծոփեցու Տաթևի համալսարանում ստացած ուսումնառու-

թյան մասին, թվարկում է այն առարկաները, որոնք նա ուսանել է. «Զի ուսեալ էր զերկոտասան մասունք իմաստասիրութեան՝ զբանաբանականն, զուսումնականն, զաստուածաբանականն և զբարոյականն, զտնտեսականն և զքաղաքականն, զթուականն, զերաժշտականն, զերկրաչափականն և զաստղաբախշականն և զամենայն իմաստ հռետորական հանճարոյ, արտաքին փիլիսոփայական է (7) դոց»[1]։ Կիրակոս Բանասերի թվարկած առարկաները ճիշտ ու ճիշտ համապատասխանում են Արիստոտելին վերագրվող վերը հիշված «Իմաստասիրական ծառի» սխեմային։

Հայ մատենագրության մեջ հայտնի է առարկաների մի այլ դասախումբ, որը ճշտությամբ համապատասխանում է եվրոպական համալսարաններում դասավանդվող «Յոթ ազատ արվեստների» (Septem artes liberales) առարկաներին։ Այդ դասախումբը բաժանվում է երկու մասի՝ եռյակ արվեստներ (Trivium) և քառյակ արվեստներ (Quadrivium)։ Եռյակ արվեստների մեջ մտնում են քերականությունը, ճարտանությունը և դիալեկտիկան (տրամաբանության սեսությունը), իսկ քառյակ արվեստների մեջ՝ թվաբանությունը, երկրաչափությունը, աստղաբաշխությունը և երաժշտությունը[2]։

Փարիզի համալսարանի նմանությամբ, Գլաձորի համալսարանում ևս, չնչին տարբերությամբ, դասավանդվել են նշված յոթ առարկաները՝ քերականություն, հռետորություն, դիալեկտիկա, երկրաչափություն, թվաբանություն, աստղագիտություն և երաժշտություն։ Այսպիսով, երկու համալսարաններում էլ դասավանդվող առարկաները, ինչպես պարզվում է, հիմնված են եղել «Յոթ ազատ արվեստների» դասախմբի վրա։

Գլաձորի համալսարանում դասախոսվող առաջատար և հիմնական առարկան հանդիսացել է աստվածաբանությունը։ Համալսարանի ուսանողը հանգամանորեն ուսումնասիրել է Աստվածաշունչը (Հին և Նոր կտակարանները) և վաղ քրիստոնեական հայրերի՝ Գրիգոր Աստվածաբանի, Կյուրեղ Աղեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Դիոնիսիոս Արիսպագացու, Գրիգոր Նյուսացու և մյուս քրիստոնեական հայրերի աշխատությունները։ Ըստ Կիրակոս Բանասերի վկայության, Թովմա Մեծոփեցին համալսարանում սովորել է Աստվածաշնչի Հին և Նոր կտակարանների մեջ մտնող 72 գրքերը[3]։ Համալսարանի հիմնական խնդիրներից մեկն էր եկեղեցական վարժ քարոզիչների պատրաստումը և պարզ է, որ աստվածաբանության ուսուցման վրա առանձնահատուկ ուշադրություն պիտի դարձնեին։

Ի դեպ, այդպիսի դրվածք են ունեցել միջին դարերում գործող բոլոր ուսումնական հաստատությունները։ «Միջին դարերի աշխարհայացքը,— ինչպես նշել է Կ. Մարքսը,— եղել է գլխավորապես աստվածաբանական... ըստ որում, հոգևորականությունը հանդիսացել է միակ զարգացած դասը։ Այստեղից ինքնին բխում է, որ եկեղեցական դոգման եղել է ելման կետ և հիմք բոլոր տեսակի մտածողության։ Իրավաբանության, բնագիտության, փիլիսոփայության ողջ բովանդակությունը գործադրվում էր եկեղեցական ուսմունքի համաձայն»[4]։

Գլաձորում հատուկ ուշադրություն է դարձվել դավանաբանական հարցերի ուսուցման վրա։ Եվ այդ հասկանալի է. համալսարանի ուսանողը պետք է հաստատուն կողմնորոշում ունենար այդ հարցերում, որպեսզի ի վիճակի լիներ գիտակցված պայքար մղել ունիթոռների դեմ։ Դավանաբանության կարևորությունը նկատի ունենալով, համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցին գրել է դավանաբանական կողմնորոշող մի քանի աշխատություններ՝ «Դավանաբանութիւն ի սուրբ երրորդութեան», «Վասն դաւանութեան հաւատոյ» «Թուղթ վասն հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ» և ուրիշներ, որոնք դասա-

---

1 Գ. Վ. Հովսեփյան. Թովմա Մեծոփեցու կյանքը. Վաղարշապատ, 1914, էջ 1։

2 Н. Суворов. Средневековые университеты. М., 1898, с. 189—212.

3 Գ. Հովսեփյան. Նշվ. աշխ., էջ 1։

4 К. Маркс и Ф. Энгельс. Сочинения. Т. XVI, ч. I, с. 295.

վանդվել են։ Չպետք է մոռանալ, որ դավանաբանական սխոլաստիկ վեճերի հիմքում ընկած էին քաղաքական սուր նկրտումներ։

Գլաձորի ուսումնական ծրագրերում մեծ տեղ էր հատկացված փիլիսոփայական գիտությանը։ Ս. Արևշատյանը, խոսելով Գլաձորի համալսարանում Հովհան Որոտնեցու ստացած փիլիսոփայական գիտելիքների մասին, իրավացիորեն նկատել է. «Հովհան Որոտնեցին իր փիլիսոփայական և աստվածաբանական կրթությունն ստացել է Գլաձորի համալսարանում՝ նրա ռեկտոր, ականավոր գիտնական և մանկավարժ Եսայի Նչեցու ձեռքի տակ։ Այստեղ նա հիմնավորապես ուսումնասիրում էր անտիկ և վաղ քրիստոնեական մտածողների՝ Պլատոնի, Արիստոտելի, Փիլոն Աղեքսանդրացու, Պորփյուրի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստվածաբանի, Նեմեսիոսի և ուրիշների աշխատությունները»[5]։ Փիլիսոփայական բովանդակություն ունեն Գլաձորի համալսարանի ուսուցիչների և ուսանողների ձեռքով գրված տասնմեկ ձեռագրեր։ Փիլիսոփայական մեծաթիվ ձեռագրերի ընդօրինակությունները ինքնին ապացույց են այն մեծ հետաքրքրության, որ ցուցաբերել են այդ հաստատությունում փիլիսոփայական գիտության նկատմամբ։

Փիլիսոփա հեղինակներից ամենամեծ տեղը Գլաձորում հատկացված է եղել Արիստոտելին, Պորփյուրին և Դավիթ Անհաղթին։ Արիստոտելին վերագրվող աշխատություններից համալսարանում ընդօրինակված են՝ «Ստորոգութիւնք»-ը, «Թուղթ առ Աղեքսանդրոս թագաւոր, պատմութիւն յաղագս աշխարհի», «Սկիզբն և նախադրութիւն գրոցն, որ ասի ըստ յունաց պերի արմենիաս և հայէռէն յաղագս մեկնութեան» և «Յաղագս առաքինութեան առ Աղեքսանդր թագաւոր»։

Ավելորդ չէ նշել, որ Արիստոտելի ստեղծագործությունների ուսումնասիրության խնդրում Գլաձորի ուսումնականներն ավելի ազատամիտ են գտնվել, քան կարելի է այդ ասել Փարիզի համալսարանականների մասին։ Փարիզի համալսարանը գտնվում էր Վատիկանի հովանավորության տակ, իսկ վերջինս որոշ դժվարություններ էր հարուցում Արիստոտելի ստեղծագործություններն ուսումնասիրելու խնդրում։ Մի առիթով, երբ Վատիկանին հայտնի է դառնում, որ Բյուզանդիոնից Փարիզ է բերվել Արիստոտելի «Մետաֆիզիկա» աշխատությունը, թարգմանվել հունարենից լատիներեն, տարածվել և կարդում են, անմիջապես կարգադրություն է արվում՝ «հավաքել դրանք և հանձնել այրմանն» այն պատճառաբանությամբ, որ այդ գիրքը «խորամանկ դաղափարներ է պարունակում» և կարող է նոր աղանդի պատճառ դառնալ։ Խստագույնս զգուշացվում է, որ այն հոգևորականը, որը «կհանդգնի կարդալ արգելված այդ գիրքը և պահել իր մոտ, ենթակա է կարգալուծման»[6]։

Անտիկ մյուս փիլիսոփաների աշխատություններից Գլաձորում մի քանի օրինակներով ընդօրինակված է Պորփյուրի «Ներածութիւն»-ը, որը վերլուծվել և մեկնաբանվել է մի շարք հայ փիլիսոփաների կողմից։ Համալսարանում հնագույն ձեռագրերից ընդօրինակվել է Զենոն Ստոիկի «Բնության մասին» աշխատությունը, որի հունարեն բնագիրը կորել է և մեզ չի հասել։ Պարզվում է, որ համալսարանի ուսանողներից մեկն այդ երկը օգտագործել է իր ավարտական «դիպլոմային» աշխատության մեջ։

Գլաձորի համալսարանում հայ փիլիսոփաներից առաջնակարգ տեղ է հատկացված եղել Դավիթ Անհաղթին։ Նրա աշխատություններից այնտեղ ընդօրինակված են՝ «Սահմանք իմաստասիրութեան», «Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտէլի», «Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիւրի» և «Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտէլի»[7]։ Մյուս հայ փիլիսոփաների աշ-

---

5 Ս. Արևշատյան. Հովհան Որոտնեցի.—Հայ մշակույթի նշանավոր գործիչներ. Երևան, 1976, էջ 298։

6 Документы по истории университетов Европы XII—XIII веков. Воронеж, 1973, с. 34—35.

7 Դավիթ Անհաղթ. Երկեր, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Ս. Արևշատյանի. Երևան, 1980։

խատությունների ընդօրինակված են՝ Դավիթ Հարքացու «Նկատումն Արիստոտելի», Մովսես Քերթողի «Վերլուծութիւնք Ստորոգութեանց Արիստոտելի սասն բանիցն», Նույնի «Հարցմունք Յորնաղի և պատասխանիք Մովսէսի հայոց Քերթողի և Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի», Ներսես Շնորհալու «Մեկնութիւն բանից Դաւթի փիլիսոփայի, որ ի կատարումն նորին տառի վասն Սահմանաց իմաստասիրութեան», և Վահրամ Բաբունու՝ «Լուծմունք ներածութեանն Պորփիւրի» և ուրիշներ։

Գլաձորում ընդօրինակված ձեռագրերում հանդիպում է իմաստասիրական անվավեր մի բնագիր՝ «Բանք իմաստասիրականք օգտակարք և պիտանացու» կամ «Բանք իմաստասիրաց պիտանի ամենայն մարդոյ»։ Այն պարունակում է անտիկ գիտնականների իրատական ասույթները հասարակական կյանքի տարբեր երևույթների մասին։ Այդ բնագիրը մեզ է հասել Գլաձորի համալսարանի յոթ ձեռագրերում։ Այդքան մեծ թվով ընդօրինակությունները հիմք են տալիս կարծելու, որ այն դասախոսվել է համալսարանում և հանձնարարվել ընդօրինակելու։ Անտիկ գիտնականների ասույթների մասին պատկերացում տալու նպատակով անհրաժեշտ ենք համարում բերել նրանցից մի քանիսը.

«Սոկրատէս ասէ. որպէս գմեղուն տեսանեմէք ի վերայ ամենայն ծաղկանց նստեալ, այլ պիտանին առնու, նույնպէս ամենայն իրաց պարտ է հմտանալ, սակայն զօգտակարն առնուլ»։

«Եւրոպիդէս ասէ. պարտ է զնոր ծնեալսն ողբալ, զի ի չարիսն զան, իսկ զվախճանեալսն խնդութեամբ յուղարկել, զի ի չարեաց ազատեցան»։

«Եւրիպիդէս ասէ. Քաջ գիտեմ և փորձ առեալ եմ, զի ունևորաց և ձեռնհասաց ամենայն մարդիկ իցեն սիրելի, իսկ աղքատացեալ այնպիսեացն յոյժ պակասին սիրելիք»։

«Սմա (այսինքն՝ Սոկրատեսին—Ա. Ա.) հարցուին, թէ զի՞նչ է դժոխք։ Ասէ. «Ոչ ես երթեալ եմ և ոչ անտի ոք եկին»։

Գլաձորի համալսարանի ուսումնական ծրագրերում ամենամեծ տեղը հատկացված է եղել հայոց լեզվին, նրա քերականության ուսումնասիրությանը։ Այդ մասին կարելի է դատել Նչեցու կողմից քերականությանը տված հետևյալ բնորոշումից. «Սա է (այսինքն՝ քերականությունը—Ա. Ա.) զուն ամենայն իմաստասիրութեան և կրթութեան և պարտ էր սոքաւք իրր աստիճանաւք ի կատարեալ իմաստութիւնն ելանել»[8]։ Նչեցու այս բնորոշումից հետևում է, որ բոլոր տեսակի գիտությունների և ուսուցման հիմքը քերականությունն է, որը լավ ուսանելուց հետո միայն կարելի է աստիճանաբար խորանալ իմաստասիրության և կրթության մեջ։

Հայ հեղինակները հույն քերական Դիոնիսիոս Թրակացու (մ. թ. ա. II—I դդ.) «Աղվեստ քերականությանը» հիմք ընդունելով, կազմել էին մի շարք քերականական ձեռնարկներ (Ստեփանոս Սյունեցին՝ VIII դ., Համամ Արևելցին՝ IX դ., Գրիգոր Մագիստրոսը՝ XI դ., Հովհաննես Երզնկացին՝ XIII դ.)։ Համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցուն, ինչպես երևում է, չեն բավարարել եղած ձեռնարկները, ուստի կազմել է հայոց լեզվի մի նոր քերականության դասագիրք՝ «Մեկնութիւն քերականի» վերնագրով։ Նչեցու քերականության մեջ ուշագրավ է ուսանողությանը տված հետևյալ հանձնարարությունը. պետք է հանգամանորեն ուսումնասիրել հայոց լեզուն և նրա բարբառները, բայց չպետք է զլանալ ուսումնասիրել նաև հարևան ժողովուրդների լեզուները, այդ միջոցով տեղյակ կլինել «լեզուաց նոցա, վասն զի կարի աւգտարք իցեն»[9]։ Թե որքան մեծ կարևորություն է տրվել քերականության ուսումնասիրությանը Գլաձորում, այդ երևում է նրանից, որ Գլաձորի ուսուցիչներից Հովհաննես Երզնկացին

---

8 Եսայի Նչեցի. Վերլուծութիւն քերականութեան. Երևան, 1966, էջ 65։

9 Նույն տեղում, էջ 63։

(Ծործորեցին) ևս կազմել է քերականության ձեռնարկ՝ «Համառոտ տեսութիւն քերականին» վերնագրով[10]։

Քերականության հետ սերտորեն կապված է եղել գրչության արվեստը։ Գլաձորի համալսարանը որոշակի խնդիր է ունեցել պատրաստել վարպետ գրիչներ, որոնց ուսերին էլ ծանրացած է եղել անցյալի հայ մշակույթի ստեղծագործություններն ընդօրինակելու և նրանք կորստից փրկելու շնորհակալ գործը։ Անցյալում հայ մատենագրության մեջ այնքան մեծ նշանակություն է տրվել գրչության արվեստին, որ այն համարել են «քանոն և գաղափար ամենայն արուեստից»։

Կիլիկիայում XII դարում, ուղղագրության գործը դպրոցներում կարգավորելու նպատակով, Արիստակես գրիչը կազմել էր ուղղագրական մի ձեռնարկ՝ «Վերլուծութիւն բացերևապէս բազմազան բայից և բառից» վերնագրով։ XIII դարում նույն աշխատանքը ընդարձակել էր Գևորգ Սկևռացին և կազմել գրչության արվեստին նվիրված մի նոր ձեռնարկ՝ «Խրատ գրչութեան» խորագրով։ Արիստակես գրչի և Գևորգ Սկևռացու կազմած այս աշխատությունները օգտագործվել են Գլաձորի համալսարանում։

Գրչության արվեստի հետ սերտորեն կապված էր մանրանկարչությունը։ Անցյալում սովորություն է եղել ոչ միայն գեղեցիկ դրել, այլև ձեռագրերը շքեղ ձևավորել և զարդանկարել։ Իսկ դրա համար Գլաձորում են աշխատել համալսարանն ավարտած այնպիսի հռչակավոր մանրանկարիչներ, ինչպիսիք են՝ Մոմիկը, Թորոս Տարոնացին, Հովհան Բջնեցին, Մաթևոս նկարիչը և ուրիշներ։ Ըստ որում, նրանք ձեռագրեր են զարդանկարել ոչ միայն Գլաձորում, այլև հայկական գրչության մյուս դպրոցներում։ Գլաձորի շրջանավարտ մանրանկարչի զարդանկարած ձեռագրերին հանդիպում ենք Հայաստանի գրչության բազմաթիվ օջախներում։ Գլաձորի մանրանկարիչներից ոմանք զբաղվել են նաև քանդակագործությամբ և ճարտարապետությամբ։ Այդպիսին է եղել Մոմիկը, որը կառուցել է Վայոց ձորի հուշարձանների զգալի մասը։ Գլաձորի մանրանկարչությունը չի կարելի կտրել Սյունյաց աշխարհի գրչության մյուս օջախներից (Գնդևան, Երերուք, Հերմոն, Նորավանք, Տաթև և այլն)։ Գլաձորում կրթություն ստացած մանրանկարիչները համալսարանն ավարտելուց հետո իրենց արվեստը տեղափոխել են իրենց աշխատանքի վայրը։

Գլաձորի մանրանկարչության առանձնահատկությունների մասին խոսելիս պետք է ասել, որ այն չունի զարդանկարչական այն արվեստը, ինչ հատուկ է Կիլիկիային, սակայն Սյունիքի մանրանկարչությունը ուշագրավ է նրանով, որ ժողովրդական տարրերին ավելի լայն տեղ է հատկացվում, քան Կիլիկիայում։ Սյունիքի մանրանկարչության մեջ արտացոլված են լեռնոտ աշխարհի գեղեցկությունները, նրա կենդանական և բուսական հարուստ բնությունը։ Սիրում են նկարել կաքավ, աքաղաղ, սիրամարգ և իրենց ծանոթ ընտանի և վայրի կենդանիներ։ Զարդանկարչության մեջ, հիմնականում, օգտագործում են հյուսվածքային մանրանկարչությունը՝ նրան տալով ավելի նրբագեղ ձևեր։ Զարդագրերում լայնորեն կիրառվում են հատկապես թռչնագրերը։

Գլաձորի համալսարանի ուսումնական ծրագրում զգալի տեղ է հատկացված եղել պատմագրությանը։ Ըստ Կիրակոս Բանասերի հաղորդած տեղեկության, Բռիմա Մեծոփեցին համալսարանում սովորել և անգիր իմացել է «Վիպասանական պատմագրերի» հիսուն և մեկ աշխատություն[11]։ Որո՞նք են այդ 51 «Վիպասանական պատմագրերը»։ Դրանց մասին տեղեկություններ կան Մխիթար Այրիվանեցու «Ժամանակագրության» մեջ։ Հայ պատմիչներից Այրիվանեցին հիշատակում է Ագաթանգեղոսին, Զենոբ Գլակին, Փավստոս Բուզանդին, Կորյունին, Եղիշեին, Ղազար Փարպեցուն, Շապուհ Բագրատունուն, Մուսես Կաղանկատվացուն և ուրիշների։ Հույն պատմիչներից հիշված են Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը» և Սոկրատես Սքոլաստիկոսի «Եկեղեցու պատմությունը»։

---

10 Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 2365։

11 Գ. Հովսեփյան. Նշվ. աշխ., էջ 1։

Գլաձորի պատմագիտական դպրոցի արգասիք է համալսարանի սան Ստեփանոս Օրբելյանի գրած «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը, որի հավասարը դժվարանում ենք մատնացույց անել տվյալ ժամանակում եվրոպական պատմագրության մեջ։ Իր բնույթով և գիտական շարադրանքով նա դուրս է գալիս միջնադարյան պատմիչների սովորական շարքից։ Սյունյաց աշխարհի պատմությունը գրելու համար Օրբելյանն օգտագործել է ոչ միայն պատմիչների ստեղծագործությունները, այլև Տաթևի վանքում պահվող հնագույն վավերագրերը, Սյունիքի հուշարձանների վիմական արձանագրությունները և հառևան վրաց ժողովրդի պատմական սկզբնաղբյուրները։

Կիրակոս Բանասերի հաղորդած տեղեկությունից երևում է, որ Մեծոփեցին համալսարանում սովորել և տիրապետել է հիսուն «նուրբ գրքերի», որոնք, պատմիչի ասելով, «դժուարահմաց են և խրթին»։ Մխիթար Այրիվանեցին իր «Ժամանակագրության» մեջ բերել է այդ «նուրբ գրքերի» հեղինակների ցանկը։ Նրանց մեջ հիշված են Փիլոն Եբրայեցին, Դիոնիսիոս Արիսպագացին, Գրիգոր Նյուսացին, Սեբերիանոսը, Գրիգոր Աստվածաբանը, Եպիփան Կիպրացին, Եփրեմ Ասորին, Հովհան Սոկեբերանը, Կյուրեղ Աղեքսանդրացին և այլ հեղինակներ։ Այդ ցանկում հիշված են նաև հունաբան դպրոցի փիլիսոփայական աշխատությունները[12]։

Գլաձորի համալսարանում դասավանդվող կարևոր առարկաներից է եղել ճարտասանությունը։ Առարկան հիմնականում կապված էր քարոզչության հետ և խնդիր ուներ գեղեցիկ խոսող և խոսածը համոզեցուցիչ փաստերով հիմնավորող բարձրորակ քարոզիչներ պատրաստել։ Անցյալում ճարտասանական արվեստին այնքան մեծ նշանակություն են տվել, որ աչքի ընկնող քարոզիչներին շնորհել են ռեթորոր կոչումը։ Այդ կոչումով են մեզ հայտնի Գլաձորի համալսարանի երկու ուսուցչապետները՝ Ներսես Մշեցին և Եսայի Նչեցին («Մեծ հռետորն Ներսէս», «արդիւնական մեծ հռետորն Եսայի»)։ Համալսարանում ճարտասանության առարկայի համար դասագիրք է ծառայել Մովսես Քերթողին վերագրվող «Գիրք Պիտոյից» աշխատությունը։ Այն ընդօրինակված է Գլաձորի երեք ձեռագրերում (№ 1681, 2515 և 6898)։ Ճարտասանության առարկայի համար օգտագործվել է նաև Եզնիկ Կողբացու անվանգական «Եղծ աղանդոց» աշխատությունը։

«Գիրք պիտոյից» աշխատության մեջ, ինչպես պարզված է, օգտագործված են հելլենիստական ճարտասանության ականավոր ներկայացուցիչներ Ափտիոնոսի և Թեոնի աշխատությունները։ Ի տարբերություն եվրոպական համալսարանների, որոնք հետևել են ճարտասանության հռոմեական ուղղությանը, հայ հեղինակները հետևել են հելլենական դպրոցի ճարտասաններին։

Գլաձորի համալսարանում դասավանդվող կարևոր առարկաներից էր տոմարագիտությունը։ Այդ առարկան անհրաժեշտ էր ժամանակագրական բարդ հարցեր լուսաբանելու համար։ Տոմարագիտության ձեռնարկ է ծառայել Հովհաննես Սարկավագի «Պատճէն տոմարի» աշխատությունը, որը մեզ է հասել Գլաձորի մի քանի ձեռագրերում։ Այն բաղկացած է հինգ բաժիններից՝ հին հայկական անշարժ, նոր հայկական շարժական, հռոմեական, ասորական և եբրայական։ Նրանցում քննարկված են տոմարական բնույթի բազմաթիվ հարցեր՝ շարժական և անշարժ տոները, տարբեր երկրներում և տարբեր ժամանակներում գործածվող թվականները։ Տեղեկություններ են տրվում տոմարական տարբեր համակարգերում գործածվող կրկնակների, կիսակների, յոթերյակների, վերադիրների, ոսկեգրերի, տանուտերների և տոմարական մյուս հարցերի մասին։ Կոնկրետ ծանոթություններ են տրվում, թե ինչպիսի հաշվումներ պետք է կատարել այս կամ այն ժամանակագրական հարցը պարզելու համար։ Ի դեպ, Իմաստասերի տոմարական այս աշխատությունը բացառիկ արժեք ունի ոչ միայն հայ, այլև ընդհանուր տոմարագիտության պատմության համար։ Տոմարական հաշվումները ուսանողությանն ավելի դյուրամատչելի դարձնելու

12 ՄՄ, ձեռ. № 582, էջ 34բ—40ա։

նպատակով կազմել են տոմարական աղյուսակներ և բոլորակներ՝ իրենց բացատրական ծանոթագրություններով։

Գլաձորի համալսարանում դասավանդվող բնական գիտությունների մեջ կարևոր տեղ է հատկացված եղել մաթեմատիկային՝ «յոթ ազատ արվեստների» քառյակ կոչվող առարկաների առաջնեկին։ Առարկայի դասավանդման համար ձեռնարկ է ծառայել VII դարի ականավոր մաթեմատիկոս Անանիա Շիրակացու թվաբանության դասագիրքը՝ թվաբանական չորս գործողությունները, խնդրագիրքը և խրախճանք կոչվող հանելուկները։ Թվաբանության դասագրքից բացի մաթեմատիկայի համար օգտագործվել է նաև Հովհաննես Իմաստասերի՝ Անիի բարձրագույն դպրոցի համար կազմված «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատությունը։ Այն ընդգրկված է Գլաձորի N 437 և 6817 ձեռագրերում։ Ուշագրավ է, որ N 437 ձեռագիրը գրված է համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցու հանձնարարությամբ՝ իբրև դպրոցական ձեռնարկ օգտագործելու համար։ Հովհաննես Իմաստասերի տվյալ աշխատության սկզբնաղբյուր է ծառայել մեր թվականության I—II դդ. ականավոր մաթեմատիկոս Նիկոմաքոսի թվաբանությունը, որն ավելի քան հարյուր տարի թվերի տեսության միակ ձեռնարկն է հանդիսացել։ Այդ բնագրի բացատրական մասում օգտագործված է նաև Փիլոն Երրայեցու (մ. թ. ա. 20—մ. թ. 50) մաթեմատիկական մի աշխատությունը։

Երկրաչափության առարկայի դասագիրք է եղել Եվկլիդեսի «Տարերք երկրաչափութեան»-ը։ Այդ աշխատության մի հատվածը XI դարում հունարենից հայերեն է թարգմանել Գրիգոր Մագիստրոսը։ Այն ընդօրինակված է Գլաձորի երեք ձեռագրերում՝ N 598, 4166 և 6897։ Ենթադրություններ են եղել, որ Եվկլիդեսի երկրաչափությունը հնում թարգմանված է եղել ամբողջությամբ, որը և օգտագործվել է Գլաձորում։ Դժվարանում ենք անվիճելի համարել այդ կարծիքը, մի բան, սակայն, պարզ է, որ առանց երկրաչափության քաջ իմացության անկարելի էր կառուցել Վայոց ձորի հոյակապ հուշարձանները, որոնց մեծ մասի ճարտարապետները եղել են Գլաձորի համալսարանի շրջանավարտները։

Մեզ են հասել Գլաձորի համալսարանի երկու ականավոր ուսուցիչների՝ Տիրատուրի և Հովհաննես Երզնկացու (Ծործորեցու) կազմած ուշագրավ հանելուկները, որոնցից առաջինը վերնագրված է. «Յոհան վարդապետէ Ծործորեցւոյ արարեալ հանելուկս», իսկ երկրորդը՝ «Տիեզերալոյս վարդապետին Տիրատրոյ ասացեալ հանելուկք իմաստասիրականք»։ Հանելուկների առաջին խումբը բաղկացած է 28 միավորից, իսկ երկրորդը՝ 24։ Մեզ թվում է, որ երկու հեղինակների հանելուկների թիվն ավելին պետք է եղած լիներ, քան այն, ինչ հասել է մեզ։ Ինչո՞վ բացատրել համալսարանի երկու ուսուցիչների կողմից միաժամանակ նույն գործը ձեռնարկելը, ո՞րն է եղել հանելուկներ գրելու շարժառիթը։ Այդ հարցին պատասխանել է հանելուկների հրատարակիչ Ա. Մնացականյանը։ Նրա կարծիքով հանելուկները կազմվել են ուսումնական նպատակով. «Եթե նկատի ունենանք,— գրել է նա,— որ հանելուկ գրողները հիմնականում նաև մանկավարժներ էին, իսկ նրանց հանելուկները հետապնդել են նաև մանկավարժական նպատակներ, ապա հավաստի կդառնա մեր կարծիքը»[13]։

Հանելուկները, իրոք, կազմված են եղել ուսումնական նպատակով։ Անշուշտ, այդ նկատի ունենալով է, որ Տիրատուրինը վերնագրված են «Հանելուկք իմաստասիրականք»

Տիրատուրի և Հովհաննես Երզնկացու կազմած հանելուկների մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ ենք համարում բերել յուրաքանչյուր հեղինակից երկուական օրինակ։

---

13 Ա. Շ. Մնացականյան. Հայ միջնադարյան հանելուկներ. Երևան, 1980, էջ 113։

Հովհաննես Երզնկացի

Ըստ արարչին մեծ սահմանի,
Նա բուրգն և հիմն է աշխարհի,
Աստուածաշէն տանն է տեղի,
Մարդկանց ոտից անկոխելի (Մասիս)[14]։

Սերմըն՝ սև,
Դաշտն՝ սպիտակ
Զեռօք ցանեմ
Բերանով հնձեմ (Գիր)[15]։

Տիրատուր

Այն քաջին ի՞նչ ասեմ ես գով,
Որ յաղթանդամ էր հասակով,
Զինուք վազեց նա ղնիրատով,
Զքսաներկու կանգնոյ չափով (Վարազդատ)[16]։

Հայր քաջ մի այլ նման սմին,
Որ յելլադա ի կրկեսին
Թափեաց զեղջիւր երկու ցլին.
Եւ զարմացումն հանդիսին (Տրդատ)[17]։

Գլաձորում ընդօրինակվել և ուսումնասիրվել են Գրիգոր Նյուսացու (331—394) «Տեսութիւն ի մարդոյն կազմութեան» և Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» (IV դ. վերջերը և V դ. սկզբները) բժշկարան-մարդաբանական բովանդակությամբ աշխատությունները (ընդօրինակված են Գլաձորի երեք ձեռագրերում՝ ՄՄ № 598-ում՝ Հովհաննես Երզնկացու աշակերտի կողմից 1303 թ., № 844-ում՝ անանուն ընդօրինակողի կողմից 1325 թ. և Նոր Ջուղայի մատենադարանի № 166 ձեռագրում՝ 1318 թ.)։

Պրոֆ. Ա. Տեր-Պողոսյանը, որը զբաղվել է Նեմեսիոսի նշված աշխատության ուսումնասիրությամբ, հավանական է համարել, որ այն որպես դասագիրք օգտագործված լինի հայկական դպրոցներում։ Նա գրել է. «Նեմեսիոսի այս գրվածքը, որ նման հարուստ բովանդակություն ունի և ներկայացնում է մարդու անատոմիան, ֆիզիոլոգիան, ինչպես և հոգեբանությունը՝ ժամանակի գիտության համաձայն, պետք է որ շատ խոշոր նշանակություն ունեցած լինի մեր գիտական գրականության մեջ։ Մեզ հայտնի է միայն մարդու անատոմիան ու ֆիզիոլոգիան, որ թարգմանելուց հետո, ամենայն հավանականությամբ, որպես դասագիրք, ծառայել է հայ դպրոցներում և դարերով սնունդ ծառայել հայ ընթերցողներին»[18]։

Գլաձորի համալսարանում դասավանդվող կարևոր առարկաներից էր երաժշտությունը։ Ստեփանոս Օրբելյանը, խոսելով Գլաձորի համալսարանում իր ուսումնառության մասին, իր ուսած առարկաների մեջ նշում է հատկապես երաժշտությունը. «...կրթեալ ի հրահանգս ընթերցման և երաժշտութեան»։ Ըստ տեղեկությունների, Գլաձորի ավանդույթով Գրիգոր Տաթևացին «ուսուցանէր գնախկին երգիչ վարդապետաց զերաժշտութիւն քաղցրալուր ձայնի եղանակաւ»։

Սկզբնաղբյուրներում լռություն է պահպանվում երաժշտության հետ կապված այն հարցի մասին, թե Գլաձորում դասավանդվե՞լ է արդյոք խազագրությունը (նոտագրությունը), թե ոչ։ Պետք է նկատի ունենալ, որ Ստեփանոս Սյունեցին, որը համարվում է հայկական խազագրության հիմնադիր-ստեղծողը, գործել է Վայոց ձորում։ Որ Գլաձորի համալսարանում խազագրությունը պետք է դասավանդված լիներ՝ այդ կարծիքի օգտին է խոսում հետևյալ փաստը. համալսարանի սան Ավագ մանրանկարիչը, Սյունյաց մետրապոլիտ Սարգիսի պատվերով, 1337 թ. ընդօրինակել է «Երդարանն և տետրակ» կամ «Խազգիրք» կոչվող ժողովածուն։ Ճիշտ է, ձեռագիրը գրված է ոչ թե Գլաձորում, այլ Պարսկաստանի Սուլթանիա քաղաքում, բայց կասկած լինել չի կարող, որ Ա-

14 Նույն տեղում, էջ 365։

15 Նույն տեղում, էջ 357։

16 Նույն տեղում, էջ 373։

17 Նույն տեղում։

18 Ա վ. Տ ե ր-Պ ո ղ ո ս յ ա ն. Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում. Երևան, 1960, էջ 198—199։

վագը խաղագրություն պետք է սովորած լիներ Գլաձորում, որի ուսանողն էր եղել[19]։

Հայկական խաղագրության ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետներից Ն. Թահմիզյանը գտնում է, որ խաղագրությունն իր պատշաճ տեղն է ունեցել Գլաձորի և Տաթևի համալսարաններում. «Ամեն ինչից երևում է,— դրել է նա,— որ Մեծոփեցին և նրա աշակերտները, Խլաթեցին ու նրա հետևողները մեզ հետաքրքրող հարցերում (այսինքն խաղագրության հարցում—Ա. Ա.) ի կատար են ածել տակավին Գլաձորում և Տաթևում իմորված պաղատիարները»[20]։

Գլաձորի համալսարանի դիտաուսումնական աշխատանքներն ավելի ծավալուն բնույթ են ունեցել, քան այդ կարելի է լինում ներկայացնել մեզ հասած սկզբնաղբյուրների հիման վրա։ Նրա ուսումնականներն իրենց ձեռքի տակ ունեցել և ուսումնասիրել են անտիկ աշխարհի և վաղ քրիստոնեական հայրերի գրած տարբեր գիտություններին վերաբերող ստեղծագործությունների մեծ մասը։ Դրա անհերքելի ապացույցը Եսայի Նչեցու «Եզեկիէլի մեկնութեան» մեջ օգտագործված սկզբնաղբյուրներն են։ Այնտեղ նշվում են անտիկ աշխարհի և վաղ քրիստոնեական հայրերի ծանոթ և անծանոթ հեղինակների բազմաթիվ աշխատություններ։ Նրանց մեջ են Արիստոտելի, Պլատոնի, Հիպոլիտեսի, Փիլոն Եբրայեցու, Սկյուլասի, Սիմաքոսի, Թիոդիտոնի, Որոգինեսի, Դիոնիսիոսի, Սուտ Կալիսթենեսի, Եփրեմ Ասորու, Կյուրեղ Աղեքսանդրացու, Ոսկեբերանի, հայկական մատենագիրներ Դավիթ Անհաղթի, Եղնիկ Կողբացու, Վանականի, Ստեփանոս Սյունեցու, Մխիթար Գոշի և այլ հեղինակների աշխատություններ։

Եվ այսպես, Գլաձորի համալսարանում ուսումնասիրվել և դասախոսվել են իր ժամանակի համար կարևոր և անհրաժեշտ բոլոր առարկաները։ Համալսարանը խնդիր է ունեցել պատրաստել զարգացած ուսուցիչներ՝ բաբունիներ և բաբունապետներ, բանասերներ, գրիչներ և մանրանկարիչներ, երաժիշտներ և այլ մասնագիտությունների գործիչներ։

Հակոբ գրիչը, խոսելով Հովհան Ոսոնեցու գործունեության և նրա մոտ սովորած ուսանողների մասնագիտացումների մասին, նշում է, որ նա «ժողովէր զհեռաւորս և զմերձաւորս, զորբս և զանրնդանիս, երկնէր և ուսուցանէր և փառաւոր աստիճան նստուցանէր, զոմանս՝ բաբունս և քահանայս, զոմանս երաժիշտս և փիլիսոփայս, զայլ ոք ծաղկող և քարտուղարս»[21]։

Որքա՞ն ուսանողություն է ունեցել Գլաձորի համալսարանը։ Բացահայտ թյուրիմացություն պիտի համարել հայագիտության մեջ քաղաքացիություն ստացած այն կարծիքը, թե Գլաձորի համալսարանում, իբր, տարեկան սովորելիս են եղել երեք հարյուր վաթսուն ուսանող։ Գլաձորի ուսանողների թիվը հաղորդողը Կղեմես Գալանոսն է, որը հետևյալն է հայտնում. «Եւ սա (այսինքն՝ Եսայի Նչեցին—Ա. Ա.) զերիս հարիւր և վաթսուն աշակերտս պճնազարդեալ էր վարդապետական արժանավորութեամբ»[22]։ Գալանոսի տեղեկությունը՝ Գլաձորի աշակերտների թվի մասին, վերաբերում է ոչ թե ամեն տարվա, այլ Նչեցու ուսուցչապետության ողջ շրջանին։ Ըստ որում, այստեղ խոսքը ընդհանուր սովորողների թվի մասին չէ, այլ միայն նրանց, ովքեր աստիճան են ստացել։ Եթե ընդունենք, որ եղել են նաև զգալի թվով ուսանողներ, որոնք սովորել են և ավարտել առանց կոչում ստանալու, այդ դեպքում Գլաձորում տարեկան սովորողների թիվը չի անցել 50—60 հոգուց։

Կարևոր է նաև այն հարցը, թե ուսանողները քանի տարի են սովորել։ Ժամանակակիցների մեծ մասի վկայությամբ ուսուցումը տևել է 7—8 տարի։ Համալսարանի ուսանողներից Ներսես Տայեցին, օրինակ, հայտնում է, որ ին-

---

19 Ղ. Ալիշան. Հայապատում, էջ 492։

20 Ն. Թահմիզյան. Խաղագրության արվեստն իր պատմական զարգացման մեջ.— «Բանբեր Մատենադարանի», № 12, էջ 98։

21 ՄՄ, ձեռ. № 1823, էջ 25բ։

22 Կղեմես Գալանոս. Միաբանութիւն Հայոց ընդ սուրբ եկեղեցւոյն Հռովմայ. Հռոմ, 1645, էջ 347—348։

քը համալսարանում սովորել է յոթ տարի։ Համալսարանի մի այլ ուսանող՝ Կարապետ Տոսպեցին հայտնում է, որ սովորել է ութ տարի։

Ուսանողների ուսումնառության 7—8 տարիները, մեր կարծիքով, պետք է համարել պայմանական, որովհետև սովյալներ չկան, թե համալսարանում կուրսեր են եղել և ուսանողները տարեցտարի քննություններով մի կուրսից մյուսն են փոխադրվել։ Հավանաբար եկող ուսանողին ամրացրել են համալսարանի ուսուցիչներից մեկն ու մեկին, և ուսանողի ուսումնառության տևողությունը կախված է եղել նրանից, թե ինչ պատրաստությամբ է եկել սովորելու և ուսման ընթացքում ինչպիսի ունակություններ է ցուցաբերել։

Գլաձորում հաստատուն ավանդույթ է գոյություն ունեցել, ըստ որի ուսանողը 7—8 տարի սովորելուց հետո պարտավոր է եղել պաշտպանել «դիպլոմ»՝ իր նախասիրած թեզը և ստանալ կոչում։ Թե ի՞նչ ձևով է կատարվել պաշտպանությունը կամ «պսակադրության» այդ հանդեսը, ինչպես կոչվել է, մանրամասնություններով մեզ հայտնի չէ։ Գիտենք միայն, որ ուսանողներն իրենց ընտրած թեզով հանդես են եկել և պաշտպանել այն համալսարանի ուսումնականների առջև։ Այս աղարողությունը ղեկավարել է համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցին։ Պաշտպանությունը, ինչպես երևում է, եղել է բանավոր։ Այսպես, օրինակ, գրոց աշակերտ Ներսեսը հայտնում է, որ ինքը պաշտպանության թեզ է ընտրել Հովհան Որոտնեցու «Ի բան մարգարէին» թեմատն և այն պաշտպանել բանավոր. «...ողորմութեամբք Տեառն սերտեցի զայս մեծախորհուրդ ասացուածս ի պատճառ գաւազանի առնելոյ աւուրն»[23]։

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող երկու ձեռագրեր պարունակում են Գլաձորի համալսարանի ուսանողների ավարտաճառերը։ Դրանցից № 631 ձեռագրի պարունակած ուսանողական ավարտաճառերին անդրադարձել է Լ. Խաչիկյանը և իր ուսումնասիրության արդյունքները հրատարակել «Գլաձորի համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները» հոդվածում, իսկ մյուսին, որն ընդօրինակված է Մատենադարանի № 724 ձեռագրում, անդրադարձել են ուրիշները։ Այդ ձեռագրերի մեջ զետեղված է ուսանողների ավարտական ատենախոսությունների մի մասը, այն էլ միայն նրանց շնորհակալական խոսքը՝ ուղղված երախտավոր ուսուցիչներին։ Բերենք այդ ավարտաճառերից մի քանի օրինակ։

Ուսանողներից մեկն իր ուսումնառության արդյունքը համեմատելով զյուղացու «կալի և հնձանի» հետ, նրա առաջին բերքը ցանկանում է նվիրել ուսուցչին. «...երախտեաց պարտական եղեալ եմ, նախ՝ քեզ հատուցից զե[ր]խայրիս կալո իմոյ և զհնձանի և զանդ[ր]անիկս բան անհամ համարձակութեանս զպտուղ շրթանց»[24]։

Մեկ ուրիշը դիմելով իր ուսուցչին, տարակուսած ասում է (բերում ենք թարգմանաբար). «Ո՞վ դու հոգևոր հայր, տարակուսանքի մեջ եմ, թե ինչի՞ հետ համեմատեմ քեզ. արեգակի՞, բայց նա միայն ցերեկն է լուսավորում. աղբյուրի՞, բայց նա պղտորվում է դրսի հեղեղումից և գազանների կոխրտոցից. բազմապտուղ այգո՞ւ, բայց նա էլ խամրում է ձմռան եղանակին»։ Ի վերջո, նա ուսուցչին համեմատում է «հոգևոր հացի սեղանի» հետ, որից իր ուսուցիչը առաստապես բաշխում է բոլորին՝ ինչպես եկեղեցականներին, այնպես և աշխարհականներին[25]։

Մի այլ ուսանող հետևյալ կերպ է գնահատում իր ուսուցչի վաստակը. «...գտանեմ բիւրապատիկ պարտուց ներքոյ, զի ի քե՛զ անկայ յորովայնէ՝ հայր, քա՛ մեծացա և զարգացա, և քա՛ ի չափ հասա։ Ձեռք քո աշխատասէր սնուցին զիս ի Քրիստոս հոգեկանօք ուսմամբ, ա՛յք քո քաղցրահայեաց լուսաւորեցին զիս, բանք քո բարի առաջնորդեցին զիս»[26]։

---

23 ՄՄ, ձեռ. № 2178, էջ 49բ։

24 ՄՄ, ձեռ. № 631, էջ 73ա-բ։

25 Նույն տեղում, էջ 55ա։

26 Նույն տեղում, էջ 52բ։

Ուսանողներից մեկը դիմել է ուսուցչին, հայտնելով նրան, որ ինքը տարակուսանքի մեջ է, թե ինչպե՞ս վարձահատույց լինի. ի՞նչ տա իր ստացածի համար. «Ի՞նչ հատուցեմ. արդյո՞ք ոսկի, կամ արծաթ, կամ թանկագին քարեր, կամ երկրի բերքից այն, ինչ սիրելի է աշխարհականներին»։ Վերջում նա դտնում է, որ դրանցից և ոչ մեկը չի կարող համեմատվել իր ուսուցչի ունեցած վաստակի հետ[27]։

Գլաձորի համալսարանի սաներն իրենց գրած ձեռագրերի հիշատակարանների մեջ հաճախ գործածում են «սիրող բանի» կամ «սպասավոր բանի» կոչումները, որը ներկա իմաստով մոտենում է «բանասեր» բառի նշանակությանը։ Այսպես, Մխիթար Երզնկացին 1314 թ. գրած իր հիշատակարանում պարծենում է, որ ինքը սովորել է Հովհաննես Երզնկացու մոտ, որը եղել է «սպասաւոր բանի»։ Եփռեմ գրիչը 1318 թ. գրած հիշատակարանում հայտնում է, որ ինքը սովորել է «սպասաւոր բանի» Մարտիրոսի մոտ։ Կյուրիոն գրիչը 1321 թ. գրած հիշատակարանում հայտնում է, որ ձեռագիրը գրվել է «ձեռամբ մեղսամակարդ և տարաշխարհիկ անձին՝ Կիւրիոնի սպասաւոր բանի»։ Մի այլ տեղ՝ «Եղև ծրագրութեամբ յոգնամեղ Կիւրենի՝ սպասաւոր բանի»։ Հովհաննես Երզնկացին (Ծործորեցին) իրեն անվանում է «նուաստ Յովհաննէս Երզնկացի սպասաւոր բանի ստացայ զգիրքս» և այլն։

Ստեփանոս Մալխասյանը «Հայերէն բացատրական բառարանում» «սպասաւոր բանի»-ն բացատրել է «բանասէր, գրականութեամբ զբաղվող»[28]։ Մեջ հասած տեղեկություններից պարզվում է, որ «սպասաւոր բանի»-ն ուսումնական պատվավոր կոչում է եղել, որը շնորհվել է շրջանավարտ ուսանողին։ Այսպես, Հովհաննես գրիչը 1281 թ. գրած հիշատակարանում հայտնում է, որ ձեռագիրը գրել է Հաղբատի վանքում, ուր և նա ստացել է «սպասաւոր բանի» կոչումը. «Եւ է որ գրեցայ ի գերահռչակ ուխտը Հաղբատայ, յորում եղև արժանի կոչել սպասաւոր բանի»։

Հայագիտության մեջ քաղաքացիություն է ստացել այն կարծիքը, ըստ որի Գլաձորի համալսարանի շրջանավարտներին տրվել է գավազան կրելու և քարոզելու իրավունք։ Անուշադրության է մատնվել «սպասաւոր բանի» աստիճանը։ Ցպետք է մոռանալ, որ աստիճանը կրողն այն անձինք են, որոնք իրենց ուսերի վրա տարել են հայ մշակույթը և խնամքով փոխանցել գալիք սերընդին։

Ուսումնասիրողներից ոմանք, համեմատելով Գլաձորի ու եվրոպական համալսարանների ուսումնական ծրագրերը, դասավանդվող առարկաները և աստիճանավորման կարգերը, նմանություն են տեսնում նրանց միջև։ Այսպես, Լ. Խաչիկյանը եկել է այն հետևության, որ Գլաձորի համալսարանն իր դրվածքով զգալի նմանություն է ունեցել հատկապես Փարիզի համալսարանին և իր գիտաուսումնական մակարդակով չի զիջել նրան։ «Գլաձորի համալսարանը,— գրել է նա,— հառնում է մեր առաջ որպես ուսումնական մի հաստատություն, որ հիմնադրված լինելով... ամենահին համալսարանից (Պրագա) շուրջ ութսուն տարի առաջ և համարյա հասակակից լինելով եվրոպական գիտական մտքի ամենահեղինակավոր հաստատություններից մեկին՝ Փարիզի համալսարանին, մրցում է նրա հետ թե՛ իր կատարած կուլտուր-կրթական դերով, թե՛ թողած մատենագրական հարուստ ժառանգությամբ և թե՛ դասավանդված գիտությունների բազմազանությամբ և խորությամբ»[29]։ Նույն կարծիքն են հայտնել նաև Ա. Մովսիսյանը, Ա. Ավետիսյանը, Կ. Սարաֆյանը և ուրիշներ։

Գլաձորի և նրան հասակակից եվրոպական համալսարանների միջև, իրոք, նկատելի են զգալի նմանություններ։ Այդ, ամենից առաջ, ակնբախ է ուսում-

---

27 ՄՄ, ձեռ N 734, էջ 139բ։

28 Ստ. Մալխասյան. Հայերէն բացատրական բառարան. հ. IV, էջ 254։

29 Լ. Խաչիկյան. Գլաձորի համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները.—Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ, հ. XXIII, Երևան, 1946, էջ 449։

նասիրվող առարկաների դրվածքում։ Ի տարբերություն անտիկ աշխարհում գործող բարձրագույն դպրոցների (Աթենք, Հռոմ, Աղեքսանդրիա և այլն), եվրոպական համալսարաններն ունեին գիտությունների ուսուցման ավելի լայն ընդգրկում. հասարակական գիտություններից բացի զգալի տեղ էին հատկացնում բնական գիտություններին։ Նույն դրվածքն ուներ նաև Գլաձորի համալսարանը. փիլիսոփայական, պատմական, լեզվագիտական առարկաների հետ պատշաճ տեղ են գրավել մաթեմատիկան, տոմարը, բժշկությունը և այլ գիտություններ։ Ի դեպ, առարկաների լայն ընդգրկմամբ է պատճառաբանվում այն փաստը, որ Գլաձորի դպրոցը, ի տարբերություն միջնադարյան հայկական մյուս բարձրագույն դպրոցների, կոչվեց համալսարան։

Արտակարգ նմանություն է նկատվում հատկապես երկու համալսարանների ուսումնական ծրագրերում։ Եվրոպական համալսարանների ծրագրերի հիմքում, ինչպես ասվել է, ընկած է եղել «յոթ աղատ արվեստների» ուսուցումը։ Նրա «եռյակ» և «քառյակ» կոչվող բոլոր առարկաները նախատեսված են եղել Գլաձորի համալսարանի ուսումնական ծրագրերում։ Եվրոպական համալսարաններում առարկաներից առանձնահատուկ տեղ է հատկացված եղել աստվածաբանությանը և վաղ քրիստոնեական հայրերի երկերի ուսումնասիրությանն ու մեկնաբանությանը։ Նույնն է եղել նաև Գլաձորի համալսարանում։ Եվրոպական համալսարաններն ավարտող ուսանողը պարտավոր է եղել քննություն հանձնել և գիտական աստիճան ստանալ։ Ինչպես տեսանք, աստիճանավորման մոտավորապես նույն կարգն է գոյություն ունեցել նաև Գլաձորում։

Հարց է առաջանում, ինչպես բացատրել այս նմանությունները։ Ամերիկահայ գիտնական Սարաֆյանն այդ նմանությունը հետևյալ ձևով է մեկնաբանել. «Ուշադրության արժանի է,— գրել է նա,— որ «համալսարան» տերմինի գործածությունը Հայաստանում XIV դարի առաջին քառորդին համընկնում է եվրոպական միջնադարյան համալսարանների լայն ծավալման և զարգացման ժամանակաշրջանի հետ։ Սա նույնպես ցույց է տալիս, որ այդ ժամանակ Հայաստանը շփման մեջ էր գտնվում Եվրոպայում մտավորական շարժման հետ և իր կրթական հաստատությունները ձևավորում էր եվրոպական նմանությամբ»[30]։

Անժխտելի է, որ XIII—XIV դդ. հայերը սերտ հարաբերությունների մեջ էին եվրոպական երկրների ժողովուրդների հետ։ Իտալիայում, Ֆրանսիայում, Լեհաստանում ու եվրոպական մյուս երկրներում հիմնվել էին հայկական դպրոցներ, որոնց բնակչությունը լայն հնարավորություններ ուներ ծանոթանալ տեղի մշակույթի, այդ թվում և գործող համալսարանների դրվածքի հետ և նրանց փորձը փոխանցել հայրենի երկիր։ Սակայն, մեր կարծիքով, նմանության հիմքում կա այլ պատճառ ևս։ Ինչպես Գլաձորի համալսարանը, այնպես էլ եվրոպական համալսարանները, ժառանգել էին վաղ քրիստոնեական ուսումնական ավանդույթը, որը գալիս էր անտիկ աշխարհից։ Գլաձորի համալսարանը կտրված չէր անցյալից. նա ժառանգեց և գործադրեց այն ամենը, ինչ վաղուց ընդունվել և քաղաքացիություն էր ստացել հայ իրականության մեջ մաշտոցյան դպրոցի ջանքերով։ XIII—XIV դդ. հանդես եկող եվրոպական համալսարանները նույնպես հիմնված էին ուսուցման անտիկ աշխարհից սկզբնավորվող ավանդույթի վրա, նրանց մոտ ևս լայն տեղ էր հատկացվել անտիկ գիտնականների և վաղ քրիստոնեական հայրերի ստեղծագործություններին։ Ուստի, բնական է, որ Գլաձորի ու եվրոպական համալսարանների ուսումնական ծրագրերում պետք է լինեին նմանություններ։ Իրարից շատ հեռու գտնվող այդ երկու համալսարաններն անտիկ ուսման ավանդույթն ընդունել են յուրովի, հայերը՝ հայկական ավանդույթով միահյուսված, իսկ եվրոպացիները՝ եվրոպական։

Գլաձորի ու եվրոպական համալսարանների միջև, սակայն, եղել են զգալի տարբերություններ։ Նշենք դրանցից կարևորները։

---

[30] K. A. Sarafian. History of Education in Armenia. California, 1930, p. 119.

Եվրոպայի համալսարանները հանդես եկան այն ժամանակ, երբ Եվրոպան գտնվում էր սոցիալ-տնտեսական և քաղաքական բոլորովին այլ պայմաններում, քան այդ վիճակված էր Հայաստանին։ Այդ ժամանակ, երբ եվրոպական ժողովուրդները, սոցիալ-տնտեսական բարենպաստ պայմաններում, ոտք էին գնում վերածննդյան շրջանը, Հայաստանը ոտնակոխ էր լինում և ավերվում օտարերկրյա նվաճողների ծանր կրունկի տակ։ Աներևակայելի այն պայմաններում, որի մեջ գտնվում էր հայ ժողովուրդը, հրաշք պետք է համարել Հայաստանում համալսարանի հիմնումը և պահպանումը։

Տարբեր էր եվրոպական համալսարանների և Գլաձորի ունեցած նյութական ապահովվածությունը։ Եվրոպայի համալսարանները պահվում էին եվրոպական արքունիքների և մեծահարուստ Վատիկանի տրամադրած անսպառ միջոցներով, իսկ Գլաձորի համալսարանն իր գոյությունը պահպանում էր Վայոց ձորի իշխանական տների, հոգևոր իշխանության և ժողովրդի տված սուղ նվիրներով։ Ըստ որում, այդ օգնությունն այնքան համեստ էր, որ անկարելի էր մեծ թվով ուսանողներ ընդունել սովորելու։ Այն ժամանակ, երբ եվրոպական համալսարաններում սովորող ուսանողների թիվը հաշվվում էր հազարներով, Գլաձորում սովորող ուսանողության թիվը չէր անցնում 50—60 հոգուց։

Գլաձորը, եվրոպական համալսարանների համեմատությամբ, ուներ կարևոր մի այլ տարբերություն. այնտեղ ուսուցումը կատարվում էր մայրենի լեզվով՝ հայերեն։ Այսպես չէր եվրոպական համալսարաններում. նրանց մոտ, մինչև XIV դարը, ուսուցումը տարվում էր լատիներենով։ Եվրոպական ժողովուրդներից ոչ մեկը, փաստորեն, չուներ դեռևս ազգային լեզվով իր համալսարանը։

Նկատելի է մի այլ տարբերություն ևս։ Եվրոպական համալսարաններն ազատ էին անցյալի մատենագրական մշակույթը վերանորոգելու և պահպանելու հոգսից, քանի որ այդպիսի մշակույթ նրանք անցյալից չէին ժառանգել։ Այլ էր Գլաձորի վիճակը, նրա կարևոր հոգսերից մեկն անցյալից ժառանգած մատենագրությունն ընդօրինակել տալու և խնամքով պահելու խնդիրն էր։ Պատահական չէ, որ Գլաձորի համալսարանում առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում վարժ գրիչներ և մանրանկարիչներ ուսուցանելու գործին։

Վերջապես, Գլաձորի համալսարանը, եվրոպական համալսարանների համեմատությամբ, ուներ կարևոր մի այլ տարբերություն ևս։ XIII—XIV դդ., երբ հայ ժողովուրդը կենաց և մահու պայքար էր մղում օտարերկրյա նվաճողների և ունեցողության դեմ, Գլաձորի ուսումնականները չմնացին սովորական դիտորդների դերում, այլ գործուն մասնակցություն ցուցաբերեցին այդ պայքարին։ Ի տարբերություն եվրոպական համալսարանականների, Գլաձորի ուսումնականները ուսումնագիտական աշխատանքների հետ իրենց ուսերի վրա վերցրեցին նաև հասարակական և քաղաքական աշխատանք։ Դեռ ավելին, Գլաձորի համալսարանը, փաստորեն, դարձավ հայ ժողովրդի գոյության համար մղվող պայքարը կազմակերպող հիմնական կենտրոն։

Գլաձորի շրջանավարտ ուսանողները պարտավոր են եղել իրենց ուսուցիչների ղեկավարությամբ ընդօրինակել հին հայկական ձեռագրեր։ Գլաձորի ուսումնականների ընդօրինակություններով են մեզ հասել հին հայկական և վաղ քրիստոնեական աշխարհի ընկնող հեղինակների դգալի մասի աշխատությունները. Անհերքելի իրողություն է, որ եթե չլիներ Գլաձորը, չլինեին միջնադարյան գրականության այս օջախները, հին հայկական շատ բնագրեր մեզ չէին հասնի։ Գլաձորին ենք մենք պարտական 1280 թ. Լուսեր գրիչի ընդօրինակած Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» սքանչելի աշխատության համար, որը տվյալ երկի մեզ հասած միակ ձեռագիրն է։ Իրավացի է Ստեփանոս գրիչը, երբ 1318 թ. Գլաձորում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում, թվարկելով իր ուսուցչապետ Եսայի Նչեցու արժանիքները, կարևորներից մեկը համարել է հին գրքերը հավաքելու, նորոգելու և ընդօրինակել տալու աշխատանքները։

Գլաձորի համալսարանը խոշոր դեր է խաղացել ոչ միայն հմուտ գիտնականներ, մանրանկարիչներ, վաստակաշատ գրիչներ, այլև հայրենասեր մասավորականներ, հասարակական և հոգևոր գործիչներ դաստիարակելու գործում։ Նրանք, պայքարելով հայ ժողովրդին սպառնացող ձուլման քաղաքականության դեմ, հասարակական և քաղաքական խոշոր գործ են կատարել։

Գլաձորի դպրոցի գործունեությունը մեծ է եղել նաև հայ ուսումնական գործի ծավալման և հայ մշակույթի պրոպագանդման ասպարեզում։ Համալսարանի սաները, խստապահանջ ուսուցչապետի ձեռքի ներքո, մեծ պատրաստությամբ ավարտելով համալսարանը և ցրվելով Հայաստանի տարբեր վայրեր, իրենց աշխատած վայրերում բաց են արել սեփական դպրոցներ և գիտելիքներն ավանդել իրենց աշակերտներին։ Հայտնի է, որ Գլաձորի սաներից Հովհան Որոտնեցին հիմնեց Տաթևի համալսարանը, Տիրատուրը՝ Հերմոնի դպրոցը, Մխիթար Սասնեցին՝ Մեծոփի դպրոցը, Կյուրիոնը՝ Վերին Նորավանքի դպրոցը, Հովհաննես Ծործորեցին՝ Երզնկայի դպրոցը և այլն։

Միով բանիվ, մեծ է եղել Գլաձորի համալսարանի գործունեությունը և՛ մանկավարժության, և՛ գիտության, և՛ հայ մշակույթի պահպանման ու տարածման, և՛ հասարակական գործունեության բնագավառներում։

ГЛАДЗОРСКИЙ УНИВЕРСИТЕТ

Проф. А. Г. АБРАМЯН

(Резюме)

Высшее учебное заведение в Гладзоре (Ехегнадзор), которое справедливо называлось университетом, внесло большой вклад в развитие армянской культуры конца XIII—начала XIV вв. Как в европейских университетах того времени, так и в Гладзорском преподавались грамматика, риторика, логика, арифметика, геометрия, астрономия, музыка, причем преподавание этих дисциплин велось на высоком уровне. Гладзорский университет выпустил немало миниатюристов, филологов, историков и др. Его традиции продолжали созданные впоследствии высшие учебные заведения Татева, Гермона, Мецопа.